Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Հայաստանի հնագույն մայրաքաղաք Էջմիածինը (Վաղարշապատ) բազմաթիվ սերունդների կողմից ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի յուրօրինակ գանձարան է:

Համաշխարհային և հայկական պատմության շատ հիշարժան իրադարձություններ են կապված քաղաքի ու նրա պատմաճարտարապետական փառահեղ հուշարձանների հետ: Որպես բազմադարյան պատմության ու մշակույթի կենդանի վկա քաղաքը ամեն անգամ նոր տեղեկություններ է հաղորդում այցելուներին:

Այդ հնագույն բնակավայրը Վարդգեսավան անվամբ գոյություն ուներ դեռևս մ. թ. ա. III դարում: Իր գոյության ավելի քան 23 դարերի ընթացքում նրանում կուտակվել են նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, որոնցից շատերը համաշխարհային կարևոր նշանակություն ունեն: Հատկապես մեծարժեք են ու դիտարժան Էջմիածնի տաճարի համալիրը, Հռիփսիմեի, Գայանեի ու Զվարթնոցի տաճարները, Գևորգյան ճեմարանի համալիրը, բազմաթիվ մեմորիալ հուշարձաններ՝ այդ թվում մեծարժեք խաչքարեր և XIX դարի վերջին ու XX դարի սկզբներին կառուցված ժողովրդական տներ: Այդ հուշարձանները գեղարվեստականորեն արժեքավորում են քաղաքը, զգացնել տալիս նրա անցած պատմական ուղին և պայմանավորում նրա ինքնատիպ ճարտարապետական դեմքը:

Մինչև վերջին տասնամյակները Էջմիածնի պատմաճարտարապետական հուշարձանների պահպանությունը կատարվել է առանձին-առանձին, միմյանցից և շրջապատող քաղաքային միջավայրից մեկուսացված: Սակայն ինչպես ցույց է տալիս քաղաքի զարգացման ընթացքը, հարցի այդպիսի լուծումը ապահովել է ընդամենը հուշարձանների ֆիզիկական պահպանությունը: Մինչդեռ ժամանակակից կյանքով ապրող պատմական քաղաքի հուշարձանների պահպանության հարցերը սերտորեն շաղկապված են ամբողջ բնակավայրի գործնական ու տարածական կառուցվածքի ներդաշնակ զարգացման, հուշարձանների արժեքավոր որակների մաքսիմալ օգտագործման և տուրիզմի կազմակերպման հարցերի հետ:

Այժմ հանրապետության պատմական քաղաքների և նրանցում կուտակված բազմաբնույթ հուշարձանների պահպանման խնդիրները համակողմանիորեն լուծվում են Հայկական ՍՍՀ Մինիստրների

Հատված Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան մասից, 19-րդ դ. վերջ.

խորհրդին կից պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ու օգտագործման վարչությունում: 1982 թ. հանրապետության կառավարության կողմից հաստատվեց վարչության կողմից մշակված «Էջմիածին քաղաքի պատմամշակութային հիմնավորում» նախագիծը (հեղինակային խմբի ղեկավար՝ Ա. Գրիգորյան, հեղինակներ՝ Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, Ռ. Թորոսյան):

Նախագծի նպատակն է ամբողջությամբ բացահայտել Վարդգեսավան-Վաղարշապատ-Էջմիածին քաղաքի պատմամշակութային պոտենցիալը, նշել նրա պատմաճարտարապետական հուշարձանների ֆիզիկական ու գեղարվեստական հատկությունների



Ներսիսյան լիճը և Էջմիածնի տաճարը, 19-դդ. վերջ





Էջմիածին քաղաքի կառուցապատման սխեման

պահպանման հնարավորությունները և ցույց տալ քաղաքի բնականոն զարգացման ուղիները՝ որպես հանրապետության պատմության և մշակույթի կարևորագույն օջախի: Ինչպես նաև հայրենական ու արտասահմանյան տուրիզմի կարևորագույն կենտրոնի: Այդ կապակցությամբ նախագծում արխիվային նյութերի հիման վրա պարզաբանվել է քաղաքի զարգացման ամբողջ ընթացքը, ուսումնասիրվել է Էջմիածնի գործնական, հատակագծային, տարածական և կերպարային փոփոխությունները: Քաղաքի ապագա զարգացման հարցերում ճիշտ կողմնորոշվելու համար նշվել է պատմական զարգաց-

Էջմիածին քաղաքի պատմաճարտարապետական հուշարձաններ.

ման ընթացքում ձեռք բերած ուսանելի որակները: Ուսումնասիրությունների հիման վրա որոշվել է քաղաքի պատմական տարածքի սահմանները և պոտենցիալ ու առաջնահերթ պեղման գոտիները: Նկատի ունենալով Էջմիածին քաղաքի բազմադարյան հարուստ պատմությունը և հայ ժողովրդի պատմության մեջ ունեցած կարևոր դերը, պատմական և հնագիտական նոր նյութեր հայտնաբերելու համոզմամբ նրա ամբողջ պատմական տարածքը հայտարարվել է պոտենցիալ պեղման գոտի:

Էջմիածին քաղաքի տարբեր տեսակի հուշարձանները (ճարտարապետության, պատմության, հնագիտության, բնության և այլն) դասակարգվել են ըստ գեղարվեստական արժանիքների, հորինվածքային դերի և գործնական նշանակության:

Ելնելով մեծարժեք ճարտարապետական հուշարձանների երկարակեցության պահպանման ու ընկալման պայմաններից, ժամանակակից օգտագործման ու բարեկարգման ընդհանուր ցուցանիշներից, սահմանվել են նրանց պահպանման գոտիները և այդ գոտիներում նախատեսվող քաղաքաշինական միջոցառումների կարգը: Սահմանվել են նաև հուշարձանախմբերի և բնական ու քաղաքային արժեքավոր համայնապատկերների պահպանման գոտիներ: Էջմիածնում ճարտարապետագեղարվեստական արժեք ներկայացնող կառույցների հորինվածքային ակտիվ դերի պահպանման համար առաջարկվել է ամբողջ քաղաքի տարածքի կառուցապատման կարգավորիչ գոտիներ:

Դարերի ընթացքում Էջմիածնում կուտակված և հայ ժողովրդի պատմության, մշակույթի ու կենցաղի համար կարևոր նշանակություն ունեցող մեծարժեք հուշարձանների բնույթը ու տեղադրությունը թելադրել են քաղաքի տարբեր հատվածներում ստեղծելու պատմա-

Գայանե տաճարի տեսքը հարավ-արևմուտքից

մշակութային, պատմաճարտարապետական, պատմաազգագրական ու պատմահնագիտական չորս գոտիներ: Նոր հասարակական կենտրոնի և մշակութային գոտիների միջև հետիոտն սերտ փոխկապվածություն ստեղծելու համար առաջարկվել է քաղաքի պատմական միջուկում պակասեցնել տրանսպորտային երթևեկությունը: Ելնելով Էջմիածնի մեծարժեք պատմաճարտարապետական ժառանգության պահպանման շահերից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքը վերածվելու է հանրապետության պատմության ու կուլտուրայի կարևորագույն օջախի, ինչպես նաև հայրենական ու արտասահմանյան տուրիզմի կարևորագույն կենտրոնի, նախագծում առաջարկվել է ընդլայնել քաղաքի մշակութային ֆունկցիաները և մեծ տեղ հատկացնել ազգային արհեստագործական իրերի արտադրությանը:

ԳՄԴ 85.113(2Հ)1
Գ 888

ԱՐՏՅՈՄ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԷՋՄԻԱԾԻՆ
Երևան «Հայաստան» 1987

АРТЕМ ГРИГОРЕВИЧ ГРИГОРЯН
ЭЧМИАДЗИН
(На армянском языке)
Ереван «Айастан» 1987г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Լ. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Ց. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Գ $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԿ

ՎՖ 01155: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5178: Գինը՝ 10 կոպ.:
Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,35 պայմ. տպ. մամ., 0,4 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28
ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.